ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

ՈՒ Ղ Ե Ր Ձ

«18» մայիսի 2025 թվականի

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Թանգարանային ոլորտի նվիրյալներ, Ստեփանավանի Ստեփան Շահումյանի, Սահակ Սահակյանի թանգարանների սիրելի աշխատակիցներ

Այսօր նշում ենք Թանգարանների միջազգային օրը՝ արժևորելով այն կարևոր առաքելությունը, որ դուք ստանձնել եք մեր պատմամշակութային ժառանգության պահպանման և արժանապատիվ ներկայացման գործում:

Սիրով շնորհավորում եմ ձեզ այս գեղեցիկ տոնի առթիվ: Ձեր կատարած աշխատանքը մեծապես նպաստում է մեր քաղաքի՝ Ստեփանավանի հոգևոր ու մշակութային կյանքի հարստացմանը:

Ձեր աշխատանքի շնորհիվ ձևավորվում է ամուր կապ սերունդների միջև, վերածնվում են մոռացված էջեր, և պատմությունն ունենում է կենդանի շունչ:

Թանգարանները դառնում են ոչ միայն հիշողության պահոց, այլև կրթական և ստեղծագործական հարթակ՝ նոր մոտեցումներով ու հետաքրքիր նախաձեռնություններով:

Մաղթում եմ ձեզ մշտական ոգեշնչում, հաջողություններ, այցելուներով լի օրեր ու նորանոր ծրագրերի իրագործում:

Թող ձեր աշխատանքը շարունակվի նույն նվիրումով՝ ի շահ մեր համայնքի մշակութային զարգացումների:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ